



ՓՈՒՆԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետարանի և
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի միջև



19 նոյեմբերի 2018թ.

Շիրակի մարզ, քաղաք Գյումրի

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (**այսուհետ՝ Պալատ**), ի դեմս Պալատի նախագահ Արա Զոհրաբյանի, մի կողմից, և

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը (**այսուհետ՝ Մարզպետարան**), ի դեմս մարզպետ Կարեն Սարուխանյանի մյուս կողմից,

կարևորելով Հայաստանի Հանրապետության, որպես իրավական և ժողովրդավարական պետության կայացման ու զարգացման, մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու ընդհանուր նպատակները,

հաշվի առնելով մարզում հանրային իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը նպաստելու, ինչպես նաև մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունը,

նպատակ ունենալով քաղաքացիների համար ապահովել օրենքով նախատեսված դեպքերում անվճար իրավական օգնություն ստանալու՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի արդյունավետ իրացումը,

կարևորելով փաստաբանության հեղինակության բարձրացումը, խթանելով փաստաբանական ինստիտուտի զարգացումը և փաստաբանական գործունեության արդյունավետությունը,

կնքեցին սույն փոխըմբռնման հուշագիրը (**այսուհետև՝ Հուշագիր**)՝ հետևյալի մասին.



Հոդված 1.

1. Հուշագրի նպատակներն են՝
 - 1) նպաստել արդարադատության մատչելիությանը,
 - 2) նպաստել արդյունավետ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացմանը,
 - 3) նպաստել բնակչության իրավագիտակցության բարձրացմանը,
 - 4) զարգացնել փաստաբանական ինստիտուտը:

Հոդված 2.

1. Համագործակցության շրջանակներում Կողմերն առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով՝
 - 1) կողմերի հավասարություն,
 - 2) մարդու իրավունքների գերակայություն,
 - 3) օրենքի նկատմամբ հարգանք,
 - 4) բարեխղճություն,
 - 5) թափանցիկություն և
 - 6) ազնվություն:

Հոդված 3.

1. Կողմերը համագործակցում են հետևյալ հիմնական ուղղություններով՝
 - 1) իրազեկման ծրագրերի իրականացում՝ մարզի բնակիչների համար, այդ թվում՝ քննարկումների կազմակերպում,
 - 2) մարզի բնակիչներին անվճար և արդյունավետ իրավաբանական օգնության տրամադրում:

Հոդված 4.

1. Կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները Հուշագրով սահմանված համագործակցության հիմնական ուղղությունների իրականացմանն ուղղված բարենպաստ պայմաններ ստեղծելու համար:

Հոդված 5.

1. Կողմերն արձանագրում են, որ Հուշագրով սահմանված համագործակցության հիմնական ուղղություններն իրագործելու համար՝



- 1) Մարզպետարանը Պալատին անհատույց տրամադրում է տարածք (**այսուհետ՝ Տարածք**)՝ փաստաբանների գործունեությունն ապահովելու նպատակով: Պալատը տարածքը տրամադրում է մարզում գործունեություն իրականացնող այն փաստաբաններին, որոնք չունեն փաստաբանական գործունեություն իրականացնելու հիմնական վայր:
- 2) Պալատը պատրաստակամություն է հայտնում անհրաժեշտության դեպքում իր միջոցներով վերանորոգել իրեն հանձնվող Տարածքը և այն ապահովել հանրային պաշտպանների և փաստաբանների բնականոն գործունեության համար անհրաժեշտ գույքով և տեխնիկայով:

2. Կողմերը պատրաստակամություն են հայտնում՝

- 1) Մարզի ավագ դպրոցներում դասընթացներ կազմակերպել աշակերտներին Մարդու իրավունքների մասին իրազեկելու և փաստաբանի մասնագիտության հիմունքներին ծանոթացնելու նպատակով:
- 2) Տարածքը զբաղեցնող փաստաբանների միջոցով յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ օր մարզի բնակիչների համար կազմակերպել անվճար իրավաբանական խորհրդատվություն: Անվճար խորհրդատվության օրը որոշվելու է կողմերի փոխադարձ համաձայնությամբ և հայտարարվելու է մարզի բնակիչներին:

Հոդված 6.

Կողմերն արձանագրում են, որ սույն Հուշագրով չեն խախտվում փաստաբանների անկախությունը, արտոնությունները կամ անձեռնմխելիությունը:

Հոդված 7.

Հուշագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

Հոդված 8.

Հուշագրում կարող են առանձին փաստաթղթի տեսքով կատարվել փոփոխություններ և (կամ) լրացումներ:



Հոդված 9.

Հուշագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հոդված 10.

1. Հուշագիրը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, 2018 թվականի նոյեմբերի 19-ին, հայերեն լեզվով՝ երկու հավասարազոր իրավական ուժ ունեցող օրինակներից:
2. Յուրաքանչյուր կողմին տրվում է Հուշագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետ՝
Կարեն Մարտիրոսյան*

*Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան*